Հաստատված է
Երևանի պետական համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ
«20» հունվարի 2005 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է մեթոդական խորհրդի իրավասությունը, ձևավորման և աշխատանքի կարգը:

1.2. Մեթոդական խորհրդի կանոնակարգը ԵՊՀ կանոնադրության 13 կետի է) ենթակետի հիման վրա հաստատում է ԵՊՀ գիտական խորհուրդը:

1.3. Մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են նույն կարգով:

2. Մեթոդական խորհրդի կարգավիճակը և կազմը

2.1. Մեթոդական խորհուրդը ուսումնամեթոդական և հրատարակմանն առնչվող հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ԵՊՀ-ում տարվող ուսումնական և գիտական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Հումանիտար և բնագիտական մասնագիտությունների գծով մեթոդական խորհուրդները ներառում են յոթական անդամ, որոնք հրամանագրվում են ռեկտորի կողմից երեք տարի ժամկետով:

2.3. Մեթոդական խորհրդի նախագահն ի պաշտոնե՝ համապատասխան ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն է:

3. Մեթոդական խորհրդի խնդիրները

3.1. Համակարգում է ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքները:

3.2. Քննարկում և երաշխավորում է՝

ա/ ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը,

բ/ իրականացվող և նոր բացվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,

գ/ պետական կրթական չափորոշիչները,

դ/ դասավանդման նոր եղանակները,

ե/ ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի և ուսանողների գիտելիքների գնահատման ռեյտինգային համակարգի ներդրումը,

զ/ արտահամալսարանական կազմակերպությունների հետ ուսումնամեթոդական և գիտամեթոդական համագործակցության հարցերը,

է/ ուսումնամեթոդական և գիտամեթոդական այլ հարցեր:

4. Մեթոդական խորհրդի աշխատակարգը

4.1. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է ռեկտորի առաջարկով կամ ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

4.2. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:

4.3. Մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են խորհրդի անդամների կեսից ավելի ներկայության դեպքում:

4.4. Մեթոդական խորհուրդը առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում ռեկտորին կամ ԵՊՀ գիտական խորհրդին:

4.5. Մեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են:

4.6. Մեթոդական խորհրդի նախագահը ղեկավարում է խորհրդի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն ԵՊՀ գիտական խորհրդում և այլ օղակներում, ստորագրում է մեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:

4.7. Մեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:

4.8. Մեթոդական խորհրդի անդամներն իրավունք ունեն խորհրդի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք: